

ՊԱՐԵՏԻ ՈՐՈՇՈՒՄ

23 մարտի, 2020 N 13

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՂՋ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՌՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁԻՆ ՏԵՍԱԿՆԵՐՈՎ ԳՈՐԾՈՒՆԵՌՈՒԹՅՈՒՆ ԾԱՎԱԼԵԼՈՒ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԻՐԱՌՎՈՂ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ


Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետությունում արտակարգ դրություն հայտարարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի մարտի 16-ի թիվ 298-Ն որոշման 2-րդ, 6-րդ և 7-րդ կետերով և որոշման հավելվածի 20 - րդ կետով՝

1. Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում ժամանակավորապես արգելել տնտեսական գործունեության առանձին տեսակներով գործունեություն ծավալելը՝ համաձայն հավելվածի:
2. Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի նախագահ Դավիթ Անանյանին՝
 - 1) Մինչև սույն որոշման ուժի մեջ մտնելը կոմիտեի պաշտոնական կայքէջում հրապարակել այն տնտեսվարողների ցանկը, որոնք անկախ գործունեության տեսակի կշռից 2020 թվականի մարտի 23-ի դրությամբ ՀՀ ՊԵԿ են ներկայացրել սույն որոշման Հավելվածի 1-ին և 2-րդ կետերում ներառված տնտեսական գործունեության ժամանակավորապես արգելված տեսակներով գործունեություն իրականացնելու վերաբերյալ տեղեկատվություն:
 - 2) Պարետին ներկայացնել ամփոփ տեղեկատվություն հավելվածով արգելված գործունեության տեսակներով զբաղվող տնտեսվարողների գործունեության վերաբերյալ՝ 2020 թվականի մարտի 1-ից մինչև մարտի 23-ը, ինչպես նաև՝ մինչև սույն որոշման գործողության ավարտը այդ տեղեկատվության թարմացումները:
3. Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետ Արման Սարգսյանին՝
 - 1) ապահովել տնտեսվարողների կողմից սույն որոշման պահանջների կատարման նկատմամբ ամբողջական վերահսկողություն:
 - 2) ամենօրյա պարբերականությամբ Պարետի՝ 2020 թվականի մարտի 18-ի Ց/10-2020 ցուցման համապատասխան Պարետին ներկայացնել ամփոփ տեղեկատվություն ընթացիկ իրավիճակի վերաբերյալ:
4. Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարար Տիգրան Խաչատրյանին՝
 - 1) ապահովել սույն որոշման պահանջների հետ կապված՝ տնտեսվարողներին պարզաբանումներ տալու գործընթացը,

2) 1-օրյա ժամկետում ապահովել սույն որոշման պահանջների վերաբերյալ հանրությանը պատշաճ իրազեկումը, այդ թվում՝ հորդորել թույլատրված վայրերում սոցիալական նվազագույն հեռավորություն պահպանելու կանոնների՝ 10 քառակուսի մետրի հաշվով 1 անձի գտնվելու վերաբերյալ:

5. Ուժը կորցրած ճանաչել Պարետի 2020 թվականի մարտի 21-ի N 9 որոշումը:

6. Որոշումն ուժի մեջ է մտնում 2020 թվականի մարտի 23-ին, ժամը 18:00-ից:

 Recoverable Signature

X 

VERIFIED OCSP 23/03/20 15:12:47 GMT+4

Signed by: AVINYAN TIGRAN 3802890590

Տ. ԱՎԻՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՂՋ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՏՆՏԵՍԱԿԱՆ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐԱՊԵՍ ԱՐԳԵԼՎԱԾ ՏԵՍԱԿՆԵՐԸ ԵՎ
ԴՐԱՆՑԻՑ ԲԱՑԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

1. ՀՀ «Առևտրի և ծառայությունների մասին» 2004 թվականի նոյեմբերի 24-ի ՀՕ-134-Ն օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված առևտրի իրականացման վայրեր, բացառությամբ դրանցում գործող՝
 - 1) պարենային ապրանքների վաճառքի իրականացման առևտրի օբյեկտները,
 - 2) դեղատները,
 - 3) գյուղատնտեսական արտադրանքի շուկաները:
2. ՀՀ էկոնոմիկայի նախարարի 2013 թվականի սեպտեմբերի 19-ի «Տնտեսական գործունեության տեսակների դասակարգիչը հաստատելու մասին» N 874-Ն հրամանի հավելվածով սահմանված՝ «Բարերի և խմիչքների մատուցման համանման կետերի ծառայությունների գործունեություն» (կոդ՝ 56.3), «Կինոթատրոններում, բացօթյա կամ այլ կառույցներում կինո- և տեսաֆիլմերի ցուցադրում, կինոակումբների գործունեություն» (կոդ՝ 59.14.0), «Շահումով խաղերի կազմակերպման հետ կապված գործունեություն» (կոդ՝ 92), «Սպորտի, զվարճությունների և հանգստի կազմակերպման բնագավառում գործունեություն» (կոդ՝ 93), «Այլ անհատական ծառայությունների մատուցում» (կոդ՝ 96), բացառությամբ՝
 - 1) Ինտերնետի միջոցով իրականացվող շահումով խաղերի և վիճակախաղերի գործունեությունը,
 - 2) Բարերի, սրճարանների գործունեությունը (կոդ՝ 56.30.1)՝ միայն սրճարանների մասով,
 - 3) Շարժական կետերից խմիչքների, ըմպելիքների վաճառքը (կոդ՝ 56.30.4),
 - 4) Բարերի և խմիչքների մատուցման ծառայություններ այլ կետերից (կոդ՝ 56.30.9),
 - 5) Թաղումների կազմակերպման հետ կապված ծառայությունները (կոդ՝ 96.03):